ՀՏԴ:947.925 Սարգսյան

DOI: 10.54503/0135-0536-2026.1-288

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Հայագիտության և հայ արևելագիտության անվիճելի առաջատարներից մեկը՝ ականավոր գիտնական, ակադեմիկոս Գագիկ Խորենի Սարգսյանը, կյանքից հեռացավ անժամանակ. մի մարդ, ով դեռ լեցուն էր գիտական և գիտակազմակերպական գործունեության ոլորտներում խոշոր ծրագրերով, ով վայելում էր հայաստանյան և արտերկրի մասնագետների անվերապահ հարգանքը:

Գ. Սարգսյանը ծնվել է 1926 թ. ապրիլի 6-ին Երևանում՝ անվանի գրականագետ, բ. գ. դ., պրոֆ., ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Խորեն Սարգսյանի ընտանիքում: Սովորել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև ընդունվել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտելուց հետո՝ 1951–1954 թթ., եղել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտ:

Այստեղ էր, որ Գ. Սարգսյանը ձևավորվեց որպես գիտնական՝ ժամանակի խոշորագույն արևելագետների անմիջական ղեկավարությամբ (Վ. Ստրուվե, Ի. Մեշչանինով, Ի. Դյակոնով և այլք), որոնց հետ նրա մշտական շփումները և իր անհատական որակները սկիզբ դրեցին հայաստանյան հայագիտության վերընթաց զարգացմանը: Նա հաղթահարեց մի շարք հին լեզուներ՝ հին հունարեն, լատիներեն, աքքադերեն, որոնք թույլ տվեցին անկաշկանդ մուտք գործել հնագույն և վաղ միջնադարյան Հայաստանի պատմության ոլորտը, ինչն իր ժամանակ հասու էր միայն առանձին հայագետների: Անկասկած, հին և ժամանակակից լեզուների իմացությունն ու մեծ էրուդիցիան այն գրավականներն էին, որոնք Գ. Սարգսյանին իրավամբ դասում են խոշորագույն հայագետներ Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի արժանի հետևորդների շարքում:

Լենինգրադում նա պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը [«Հին Հայաստանի քաղաքը» (ռուսերեն), 1954]՝ վերադարձավ Հայաստան և աշխատանքի անցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում: 1967 թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսություն՝ «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» թեմայով (որպես գիրք լույս էր տեսել 1966 թվականին): Այդուհետ նրա գիտական ու գիտակազ-

* Ներկայացվել է 19. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

մակերպչական ողջ գործունեությունը ծավալվեց հայաստանյան գիտության կաճառում: Հենց գիտակազմակերպչական մեծ ունակություններն էին, որ նկատվեցին Ակադեմիայի ղեկավարության կողմից: Գ. Սարգսյանն այդ համակարգում վարեց պատասխանատու պաշտոններ. աշխատեց որպես Ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղար, ապա՝ Պատմության ինստիտուտի տնօրենի՝ գիտական հարցերի գծով փոխտնօրեն:

Սակայն Գ. Սարգսյանի գիտական և գիտակազմակերպչական գործունեության բարձրակետը դարձավ 1971 թ., երբ նշանակվեց Ակադեմիայի նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն: Այնուհետև՝ 1988–1990 թթ., վարեց ԳԱ փոխնախագահի, 1994–1998 թթ.՝ Հասարագիտական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները:

1974 թ. նա ընտրվեց ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1986-ին՝ իսկական անդամ: 1984 թվականից եղել է ԽՍՀՄ արևելագետների միության ՀԽՍՀ մասնաճյուղի նախագահը: 1985 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի կազմմանը մասնակցելու համար:

Արևելագետ-հայագետ ակադեմիկոսը պատկանում էր այն գիտնականների թվին, որոնց ուսումնասիրությունները չէին սահմանափակվում մասնավոր խնդիրներով: Փայլուն կրթությունը, անձնական որակները, լայն մտահորիզոնը և լայնախոհությունն այն գրավականներն էին, որոնք թույլ տվեցին նրան ժամանակի ընթացքում վերածվելու հայագիտության ոլորտում անվերապահ հեղինակության:

Գ. Սարգսյանի աշխատություններում դասական հայագիտությունը չի սահմանափակվում այս կամ այն դարաշրջանի իրողությունների մեխանիկական վերականգմամբ: Յուրաքանչյուր քննարկվող հիմնախնդիր դիտարկվում էր համաշխարհային պատմության համաժամանակյա իրողությունների և գործընթացների լայն ետնախորքի վրա, և այդ ամենը՝ տեսական խոր գիտելիքների կիրառմամբ: Նա հեռու էր գավառական նեղ մտայնությունից և գտնում էր, որ հայագիտությունը չի կարող գոյատևել միայն ազգային շրջանակներում: Համոզված և հետևողականորեն իրականացնում էր հայ արևելագիտության ու մասնավորապես հայագիտության միջազգայնացման ծրագիրը: Իսկ դրա համար անհրաժեշտ էին իրենց մասնագիտությանը և արևելյան ու եվրոպական լեզուներին լավ տիրապետող գիտական կադրեր, ովքեր կարող էին հայաստանյան գիտությունը դուրս բերել միջազգային լայն ասպարեզ: Եվ նա այդ ուղղությամբ իրականացրեց հայագետների ու մասնավորապես արևելագետների կադրային բազան ընդլայնելու և որակապես ամրապնդելու հեռահար քաղաքականությունը:

Անվիճելի է Գ. Սարգսյանի ներդրումը հայ արևելագիտության ոլորտում: Նրա և իր համախոհների (Հ. Ինճիկյան, Ն. Հովհաննիսյան, Ն. Հարությունյան, Պ. Մուրադյան) ջանքերով սկսվեց արևելագիտության տարբեր բնագավառների գծով որակյալ մասնագիտական կադրերի պատրաստումը, որի նպատակով ԽՍՀՄ առաջատար գիտական կենտրոններ (Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի) ուղարկվեցին եվրոպական լեզուների գիտակ տասնյակ երիտասարդներ, ովքեր վերադառնալով՝ Հայաստանում դրեցին դասական արևելագիտության հիմքերը: Գ. Սարգսյանի նպատակը տեղում գիտական ինքնուրույն դպրոցի ստեղծումն էր, որը կապահովեր գիտնականների հաջորդ սերունդների պատրաստումը: Այդ քաղաքականությունը շուտով տվեց իր ցանկալի

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 1

արդյունքը. կայացավ հայ արևելագիտական դպրոցը, որը ժամանակի ընթացքում ինքը սկսեց պատրաստել սեփական կադրեր:

Գիտնականի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Արևելագիտության ինստիտուտում ստեղծվեցին նախկինում Հայաստանում միայն առանձին անհատներով ներկայացված գիտական մի շարք ուղղություններ՝ սեպագրագիտություն, կովկասագիտություն, արևելյան աղբյուրագիտություն: Դրա վկայությունը նշված ուղղություններին նվիրված պարբերականների («Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա», «Արևելյան աղբյուրագիտություն»), ինչպես նաև «Խուրրիներ և ուրարտներ» վերտառությամբ շարքի հրատարակություններն էին:

Հայագիտական ու արևելագիտական կադրերի մասնագիտական գիտելիքների և ունակությունների ամրապնդման նպատակով նրա նախաձեռնությամբ ավելի քան երբևէ ընդլայնվեցին արտերկրի մասնագետների հետ անմիջական շփումները: Արևելագիտության ինստիտուտի աշխատակիցները պարբերաբար մասնակցում էին արտերկրում և Հայաստանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին, հրատարակվում էին արտասահմանյան գիտական պարբերականներում: Գ. Սարգսյանի անձի՝ որպես գիտնականի կարևորագույն առանձնահատկությունը գիտական և գիտակազմակերպչական գործունեության օրգանական համադրումն էր: Նրա գիտահետազոտական գործունեության կարևոր առանձնահատկությունը սկզբունքայնությունն էր: Ակադեմիկոսը վերին աստիճանի սկզբունքային էր գիտական հարցերում և երբեք չէր առաջնորդվում պահի թելադրանքով կամ փոխում իր տեսակետները ճնշման տակ: Նրան բնորոշ էր մշտական պայքարը մակերեսայնության և հատկապես գավառականության դեմ: Գ. Սարգսյանը մարմնավորում էր գիտնական-քաղաքացու կերպարը, ով փորձում էր պահպանել գիտության մաքրությունը և այն զերծ պահել սիրողական մակարդակի ոտնձգություններից:

Ակադեմիկոսն այն եզակի մասնագետներից էր, ում գիտական հետաքրքրությունները զուգահեռաբար ընդգրկում էին հայագիտության գրեթե բոլոր հիմնական ոլորտները, ինչպես նաև ասուրագիտությունը, ընդ որում՝ հավասար համամասնությամբ: Դրանք ներառում էին հայագիտության բազմաթիվ խնդիրներ՝ 1. հինարևելյան քաղաքային համայնք, 2. հելլենիստական դարաշրջանի Միջագետքի սոցիալ-քաղաքական կյանք, 3. ուշբաբելոնյան և հելլենիստական դարաշրջանների սեպագիր տեքստերի հրատարակություն և ուսումնասիրություն, 4. հին Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմություն, 5. Մովսես Խորենացու Հայոց պատմության ժամանակագրություն և պատմագիտական առանցքագաղափար, 6. Ուրարտու-Հայաստան և հայ ժողովրդի կազմավորման խնդիրներ:

Գ. Սարգսյանի ուսումնասիրություններին հատուկ էր յուրաքանչյուր պատմական իրադարձության կամ երևույթի հետազոտությունը պատմական լայն ետնախորքի լույսի ներքո: Դրա վառ օրինակը հին Հայաստանի քաղաքների ու քաղաքային մշակույթի ուսումնասիրությունն էր հելլենիստական պոլիսի և Բաբելոնիայի «քաղաքացիական-տաճարային համայնքի» հետ զուգահեռ հետազոտության միջոցով: Հենց շնորհիվ այդպիսի մոտեցման նա պարզեց, որ Հայաստանի քաղաքներն իրենցից ներկայացնում էին հելլենիստական աշխարհին բնորոշ կիսանկախ քաղաքային համայնքներ («Тигранакерт. Из истории древнеармянских городских общин», Москва, 1960): Առաջնորդվելով

նույն գործելակերպով՝ Գ. Սարգսյանն այդ մենագրության մեջ և մի շարք հոդվածներում փորձեց պարզել հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները՝ իրավացիորեն շեղվելով խորհրդային ժամանակներում գերիշխող այն հիմնադրույթից, որ անտիկ ու հինարևելյան աշխարհը ստրկատիրական հասարակարգ էր: Նրա կարծիքով՝ այդ համակարգում Հայաստանը յուրահատուկ տեղ ուներ և շատ էր տարբերվում դասական ստրկատիրական հասարակարգից («Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին», Երևան, 1962) և որ, այսպես կոչված, ստրուկ-մշակների կարգավիճակը մոտ էր ճորտականին:

Գ. Սարգսյանի ուսումնասիրությունների մյուս ուղղությունը հին Հայաստանի քաղաքական պատմության խնդիրներն էին, որոնք տեղ են գտել մեծաքանակ հոդվածներում[1]: Դրանցում հանգամանորեն քննարկվում են մ. թ. ա. III–I դարերում գոյատևած հայկական չորս պետությունների (Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե) քաղաքական պատմության խնդիրները: Հեղինակն այդ համատեքստում հատուկ քննարկման առարկա էր դարձրել երկու խոշոր տիրակալների՝ Արտաշես I-ի և Տիգրան II-ի պետականաստեղծ գործունեությունը, նրանց իրական դերը հայկական պետականության կայացման ու զարգացման գործում:

Գ. Սարգսյանի ուսումնասիրություններում կարևոր տեղ են զբաղեցնում հին Հայաստանի հոգևոր ու նյութական մշակույթի ամենատարբեր խնդիրները՝ թագավորի, թագուհու և նրանց նախնիների աստվածացման՝ հելլենիստական պետություններում ընդունված մինչքրիստոնեական սովորույթի վերհանումը և այլ խնդիրներ[2]:

Փորձելով բացատրել V դարի հայ մատենագրության ծագումը և ոսկեդարը՝ նա առաջ քաշեց մի վարկած, ըստ որի՝ դրա պատճառը քարոզիչների կողմից Հայաստանում գոյություն ունեցած այլալեզու քրիստոնեական տեքստերի՝ հայերենով բանավոր մատուցումն էր հավատացյալներին: Նրա կարծիքով՝ հենց այդ հանգամանքը թույլ տվեց V դարի հայ թարգմանիչներին մշակել համապատասխան տերմինաբանություն[3]:

---

[1] Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայաստանը մ. թ. ա. II դարում. – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1965, № 3, էջ 57–72, ն ո ւ յ ն ի՝ Տիգրան Բ-ի տերությունը. – ՊԲՀ, 1966, № 1, էջ 93–112, ն ո ւ յ ն ի՝ Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 41–61, ն ո ւ յ ն ի՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, ն ո ւ յ ն ի՝ Ֆեոդալական հասարակարգի հաստատումը Հայաստանում և հին հայկական պետության անկումը. – ՊԲՀ, 1972, № 2, էջ 219–236, ն ո ւ յ ն ի՝ Список парфянских Аршакидов в раннесредневековой армянской историографии. – «Кавказ и Византия» (Ереван), 4, 1984, с. 130–141:

[2] Г. С а р г с я н. Обожествление и культ царей и царских предков в древней Армении. – «Вестник древней истории» (Москва), 1966, № 2, с. 3–26; On the problem of the cults of the Hellenistic world [the cult of the royal dynasty in ancient Armenia], Studien zur Geschichte und Philosophie des Altertums. Budapest, 1968, p. 288–292); ն ո ւ յ ն ի՝ Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը. – ՊԲՀ, 1969, № 1, էջ 107–126:

[3] Տե՛ս Г. С а р г с я н. К предыстории армянской письменности. Ереван, 1978; ն ո ւ յ ն ի՝ Հայոց գրական լեզվի նախնական փուլերը պատմաբանի հայացքով. – ՊԲՀ, 1990, № 4, էջ 22–30:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 1

Գ. Սարգսյանն իր ուսումնասիրություններում անդրադարձել է նաև Ուրարտու-Հայաստան խնդրին[4]: Այստեղ նա փորձել է հանգամանորեն վերլուծել հայոց ծագումնաբանության ժամանակագրական և աշխարհագրական հիմնախնդիրները, դրան մասնակից էթնիկ խմբերի տեղաշարժերն ու դրանց փոխհարաբերությունները:

Գ. Սարգսյանի գիտական գործունեության անվիճելի լուսապսակը Պատմահայր Մովսես Խորենացուն նվիրված հետազոտություններն են: Այստեղ է, որ լիուլի դրսևորվում է նրա ստեղծագործական ողջ ավյունը, լայնախոհությունը, գիտության մեջ գերիշխող կարծրատիպերից հրաժարումը: Խորենացուն նվիրված բազմաթիվ մենագրություններում և հոդվածներում նա մատենագրի Պատմությունն արժևորեց այնպիսի խորությամբ, որ այսօր դժվար է պատկերացնել ավելի ամբողջական մեկնաբանություն: Շնորհիվ Գ. Սարգսյանի՝ Մովսես Խորենացին հառնում է որպես հայ հոգևոր մշակույթի ու հայոց պետականության հենասյուները կերտող իսկական հայրենասեր անձնավորություն, ում անմահ աշխատությունը դաստիարակել է բազմաթիվ սերունդներ ու այդպիսին կմնա նաև հետագայում:

Մովսես Խորենացու Պատմության ուսումնասիրությունը Գ. Սարգսյանը իրականացրեց ամենայն բարեխղճությամբ՝ առաջարկելով այն դիտարկել որպես մեկ միասնական համակարգ, որտեղ թե՛ փաստերը, թե՛ ժամանակագրությունը և թե՛ հեղինակի կողմից մշակված աշխատության առանցքագաղափարը եզակի տեղ ունեին հայ միջնադարյան պատմագրության մեջ: Ասվածը վերաբերում է հատկապես Պատմահոր օգտագործած սկզբնաղբյուրներին և դրանց ընտրությանը: Դրանց շարքում նա առանձնահատուկ նշանակություն տվեց բանավոր աղբյուրներին (առասպելներ, ավանդազրույցներ, երգեր), ինչպես նաև նյութական մշակույթի հուշարձաններին (քաղաքներ, ամրոցներ, տաճարներ, ջրանցքներ), որոնց նկարագրությունը պահպանվել էր նրա երկասիրության մեջ: Կարևոր նշանակություն ունեին նաև լեզվական աղբյուրները՝ հատուկ անունների ստուգաբանությունը, որոնք թույլ տվեցին Գ. Սարգսյանին վերականգնել Խորենացու կողմից ներկայացվող հոգևոր աշխարհը[5]:

Գ. Սարգսյանի ուսումնասիրությունների խորենացիական շարքի կարևոր ներդրումը արևմտյան մասնագիտական շրջանակներում գերիշխող գերքննադատական մոտեցման ժխտումն էր, ըստ որի՝ Պատմահոր աշխատությունը չէր կարող ստեղծվել V դարում, բացի այդ՝ չի կարող հավաստի պատմական սկզբնաղբյուր լինել: Հայագետ-ակադեմիկոսը բազմիցս անդրադարձել է այդ խնդիրներին և հենց հիմնականում նրա շնորհիվ հակախորենացիական դիրքորոշման հեղինակները տեղի տվեցին: Նրա մեկնաբանմամբ՝

---

[4] Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Ուրարտական տերությունը և հայերը, Երևան, 1988, էջ 47–126, ն ո ւ յ ն ի՝ Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին. – ՊԲՀ, 1990, № 1, էջ 23–40:

[5] Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Երևան, 1991, ն ո ւ յ ն ի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրները). – ՊԲՀ, 1992, № 2–3, էջ 27–50, ն ո ւ յ ն ի՝ Մովսես Խորենացու նախարարական տոհմերի ցանկը. – ՊԲՀ, 1996, № 1–2, էջ 73–90:

Խորենացու աշխատության արժևորումը հնարավոր է միայն Պատմահոր աշխատանքային լաբորատորիան ընկալելու դեպքում, ինչը Գ. Սարգսյանն ավելի քան համոզիչ վերականգնեց և ամբողջացրեց:

Ի հավելումն իր հիմնարար ուսումնասիրությունների՝ Գ. Սարգսյանը զգալի ավանդ ունի հայագիտության երախտավորների գիտական ժառանգության պահպանման և արժևորման գործում: Նա խմբագրեց ու հրատարակության պատրաստեց Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Թ. Ավդալբեգյանի, Ե. Տեր-Մինասյանի աշխատությունները:

Հայագիտական հետազոտություններին զուգահեռ Գ. Սարգսյանը զբաղվում էր նաև հելլենիստական դարաշրջանի միջագետքյան սեպագրական տեքստերով: Նրա գրչին են պատկանում այդ տեքստերի գիտական հրատարակությունները և ուսումնասիրությունները[6]:

Վերոգրյալ աշխատությունները մեկ անգամ ևս ցուցադրում են Գ. Սարգսյանի խորագիտակությունը հինարևելյան և հունական քաղաքակրթական իրողություններում:

Գ. Սարգսյանը մահացել է 1998 թ. օգոստոսի 25-ին Մոսկվայում: Երջանկահիշատակ ակադեմիկոսը հեռացավ կյանքից գիտական և գիտակազմակերպչական մեծ ու հեռահար ծրագրերի իրականացման փուլում, սակայն այն, ինչ նա հասցրեց անել հայ արևելագիտության և հայագիտության համար անգնահատելի է: Գ. Սարգսյանի հիշատակը միշտ վառ կմնա նրա հետ անձամբ շփված մասնագետների սրտերում:

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Հին Արևելքի քաղաքակրթությունների պատմություն: Հեղինակ է 10 գրքի և շուրջ 100 հոդվածի:
ORCID: 0000-0003-2475-7115. aramkosyan@yahoo.com

[6] New Cuneiform Texts from Uruk of the Seleucid Period in the Staatliche Museen zu Berlin, Staatliche Museen zu Berlin. Forschungen und Berichte. Archäologische Beiträge, 1975, Bd. 16; Bruchstücke von seleukidischen Wirtschaftstexten aus Uruk in den Staatlichen Museen zu Berlin, Altorientalische Forschungen, 1977, 5 և այլն), ինչպես նաև դրանց ուսումնասիրությունը (City Land in Seleucid Babylonia, Ancient Mesopotamia. Moscow, 1969; Greek Personal Names in Uruk and the Graeco-Babyloniaca Problem, Acta Antiqua Acad. Scient. Hungaricae, T. 22. Budapest, 1974, p. 495–501; Греческая ономастика в Уруке и проблема Graeco-Babyloniaca. – «Древний Восток» (Ереван), 2, 1976, с. 181–217; Довольство-išqu в городе древней Вавилонии – аналог полисных раздач. – «Древний Восток», 3, 1978, с. 88–92; Манумиссии в селевкидско-аршакидском Уруке. – «Древний Восток», 5, с. 41–56 և այլն):